# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 76-Ա

## ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2018թ. դեկտեմբերի 21-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյանի քաղաքային համայնքում 2019թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 56-Ն որոշումը և Թումանյան համայնքի ԱՁ -ի հայտը՝
որոշում եմ.

1.Թույլատրել Թումանյան համայնքի ԱՁ Հրանուշ Ղազարյանին իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի արտադրանքի վաճառք - գ.Մարց 2019թ. հունիսի 1-ից մինչև 2019թ. սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար:
2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 77-Ա

## ՌՈԲԵՐՏ,ԱՐՏԱԿ, ԻՐԻՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ԵՎ ԳՈՀԱՐ ՄԱՂԱՔՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Ռոբերտ,Արտակ,Իրինա Մխիթարյանների և Գոհար Մաղաքյանի դիմումը՝
որոշում եմ.

ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,ք.Թումանյան,3-րդ փողոց,1-ին նրբանցք, տուն 10 հասցեում 06-004-0008-0046 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքի նկատմամբ դադարեցնել Ռոբերտ,Արտակ,Իրինա Մխիթարյանների և Գոհար Մաղաքյանի սեփականության իրավունքը,քանի որ նշված ծածկագրի տակ գրանցված անշարժ գույքը չի պատկանում իրենց,այլ պատկանում է Ռոբերտ Հայկազի Մխիթարյանին /ծնված 1961թ./:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ՁԱՎԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 78-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով,հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի քաղաքային համայնքում 2019թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին >> թիվ 56-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի ա)պարբերությունը և հաշվի առնելով <<Հոքուշին>> ՍՊԸ-ի տնօրեն Ա.Բաբայանի դիմումը՝
որոշում եմ.

1.Բավարարել <<Հոքուշին>> ՍՊԸ-ի տնօրեն Ա.Բաբայանի դիմումը և թույլատրել կատարել <<Թումանյան քաղաքի Հ.Թումանյանի արձանի պուրակի և հրապարակի տարածքի բարեկարգման>> շինարարական աշխատանքները:
2.Շինարարական աշխատանքները սկսել լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված և համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի առկայության դեպքում:
3.Շինարարական աշխատանքների կատարման համար համայնքապետարանի դրամարկ մուծել 15000 ՀՀ դրամ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ու Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 97-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով ,հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1381230 վկայականը, տրվ.30.06.2004թ և քաղաքացի Արման Գառնիկի Մելքոնյանի դիմումը՝
որոշում եմ.

1. Քաղաքացիներ Ռուսլան և Ռոման Գագիկի Մելքոնյաններին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ Թումանյան քաղաքի բնակելի տանը (ծածկագիր՝ 06-004-021-000034$^{1}$) մակերեսի չափը՝93,0քմ և 0,1605 հա մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել նոր <<ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք.Թումանյան 11-րդ փողոց,շ.5,բն.3>> հասցեն:
2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՁԱՎԱՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 98-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով ,հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման գիրք 4Ա-1-68, տրվ.26.08.1991թ և քաղաքացի Անահիտ Սամվելի Հովհաննիսյանի դիմումը՝
որոշում եմ.

1. Հանգուցյալ Աշխեն Գևորգի Եղինյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ Թումանյան քաղաքի բնակարանին, մակերեսի չափը՝38,2քմ տրամադրել նոր <<ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք.Թումանյան 5-րդ փողոց,շ.7,բն.1>> հասցեն:
2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 144

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33,34,37-րդ հոդվածների դրույթներով ,հիմք ընդունելով Թումանյան համայնքի Լորուտ բնակավայրում ջրամատակարարման ներքին ցանցի հիմնանորոգման և բարեկավման աշխատանքների շահագործման ընդունումը (գնման պայմանագիր՝ <<ԼՄԹՀ-ԳՀԱՇՁԲ-19/03>>) և ՀՀ քաղաքաշինության,տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 11.12.2019թ.ՔՏՄ/19.5/10702-19 գրությունը՝
որոշում եմ.

1.Ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.
1)Մոսինյան Արման - Թումանյան համայնքի ղեկավարի օգնական,
2)Թորոսյան Նորիկ - <<Թումանյան քաղաքի կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի տնօրեն,
3)Բեգլարյան Հովնան - Լորուտ բնակավայրի վարչական ղեկավար,
4)<<Հիդրոգազշին>> ՍՊԸ-ի հեղինակային հսկողություն իրականացնող ներկայացուցիչ Սամվել Քոչարյան /համաձայնությամբ/,
5)<<ԳՈԼԴ-ՆԵԹ>> ՍՊԸ-ի տեխնիկական հսկողություն իրականացնող ներկայացուցիչ Սամսոն Մելիքսեթյան /համաձայնությամբ/,
6)ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ Ալեքսանդր Հարությունյան /համաձայնությամբ/,
7)ՀՀ քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Լոռու տարածքային բաժնի քաղաքաշինական գործունեության վերահսկողության գլխավոր մասնագետ Վարուժան Մուրադյան /համաձայնությամբ/,
8)ՀՀ քաղաքաշինության տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Լոռու տարածքային բաժնի քաղաքաշինական գործունեության վերահսկողության առաջատար մասնագետ Սահակ Ավագյան /համաձայնությամբ/:
2.Հանձնարարել հանձնաժողովին՝ ուսումնասիրելու և կազմելու ավարտված շինարարական օբյեկտի շահագործման ընդունման ակտը:
3.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2019թ. դեկտեմբերի 6-ի <<Ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 137 որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**